

կար է այս գիւտս ամբիխեան օրական մամլոյն հա-  
մար, որ իւր տեղեկութիւններն ու լրերը մեծաւ  
մասամբ հաստատանանց պատկերներովն եւ դէմքե-  
րով կը յայտարարէ: Գծագրիչը՝ օր յամախ լրա-  
բերին օգնականն ու գործակիցն է, կրնայ նա Օրէան  
պատահած մէկ դէպքը՝ զոր լրերն իւր լրագրին  
ի լինանս միեւնոյն իրիկունն եկկարական թեկերու  
ձեռքը կը հաղորդէ, մի եւ նոյն ժամանակ պատկեր  
մը ի միասին յղել, եւ այս՝ նոյն լրագրին մէջ ստո-  
րագրութեամբ կրնայ տպուիլ: Լուսանկարք իսկ  
կրնան հեռագրուիլ:

**Տ Ն Տ Ե Ս Ս Կ Ն Ն**

**Մասնակց ինանքը:**

Մասնակց իրեր ձեռնելու եւ խոսելու գոր-  
ծիք՝ մարզուն համար մեծ նշանակութիւն ունենա-  
լուն, զանոնք միասակար ազդեցութիւններէ պահ-  
պանելու եւ լաւ ինանելու համար հետեւեալ կա-  
նոնաց միտ գնելու է:

1. Հաստ պաղ ու շատ սաք կերակուրներ եւ  
իմպելիներ եւ խառնիխուռն մերթ սաք եւ  
մերթ պաղ ստեղէ գգուշացիք, վասն զի սառով ա-  
տամանքը դիւրաւ իրենց փայլը կը տուեն: Դմա-  
նագետ ստեպ սաստիկ թթու ուտելը միասակար է:
2. Աւ նուազն օրն անագո՛մ մը դաղը չրով եւ  
միջակ կարծրութիւն ունեցող խոզանկաւ մ'ա-  
կուաներդ լուս: Կերակրէ ետքը բերանդ ցօղէ, որով  
ակուաներդ մէջ մնացած կերակրէ շինաց մնացորդք  
կը հեռացուին: Կանաւ առտու եւ երկկոյ պաղ չրով  
կոկորդք որդեղել զանց մի առնիր:
3. Կարծր իրեր զ. օ. ընկոյր, կաղնի եւն ա-  
կուաներդ մի կտորեր, վասն զի սառով ակուանե-  
րու փայլը կը մնաստի:
4. Կրնանք ակուանքը պէտք եւ շուտով լեցը-  
նել սառլ, իսկ ցաւ պատճառովներն ու նմանապէս  
շատ փտածներն ալ հանել սառլու է, վասն զի վեր-  
ջինք նոյն իսկ սառող ստամանց վարակուելուն  
պատճառ կ'ըլլան:
5. Ատամնաքար բռնիկ մը մաքրել սառլ:
6. Գրանակով կամ որեւիցէ մտապէլի  
ստամանքը մաքրելէ զգուշացիր. լուցովայն իբր  
ստամանքը գործածելու չէ:
7. Կանանպէս ակուայով գունաւոր դերման  
կտրելու չէ. որովհետեւ այսպիսի դերմանք շատ  
անպակ թունաւոր դոյներով ներկանք կ'ըլլան:
8. Ատամանց մէջ մնացած կերակրէղնաց  
մնացորդներուն փռելէն կամ ստամանց փտած ար-  
մատն յառաջ եկած բերնի անհատոյ հոտը կը հե-  
ռացուի ստամանքը լաւ մաքրելով եւ դերմանկա-  
նեղի կախով խառնուած չրով բերանը որդեղելով:  
Զորուր ցքո՛մ ալ սին ակուանքը կրնան մաքրուիլ,  
վասն զի ցքին ստամանակեր օրգերը կը ստակեցնեն:
9. Ակուայ մաքրելու փոշին բուռ եւ ջերու  
մեծապայն մաքր խոտելն են, վասն զի այնպիսի իրեր  
ն թթուն կը բովանդակեն, որ ակուայի փայլը կ'ա-  
պականեն, եւ շունին այն ապկեցութիւնը, որ անոնց  
կը արուի: Ակուայ մաքրելու իբր ստան ու անկաւ  
միջոց կը յանձնուին կամ ձեռնալաքար ու Գացի փշրեալ  
կողմէն: Հացի կողմէ փոշն հետեւեալ եղանակաւ

կը պատրաստուի. կողմնները կապակայն վրայ խո-  
րովելու եւ յետոյ փոշի դարձնելու եւ քիչ մ'ալ  
աղ խառնելու է: Յետ այս յիշեալ միջոցներով ա-  
տամանքը մաքրելն վիճելք բերանը զաղը չրով ս-  
ղոցելու է՝ արդէն իսկ յայտնի է եւ յիշատակելն  
ուներդ:


**Գորգներ մաքրել:**

Նախ եւ յառաջ գորգը կարգաւորեալ ծե-  
ծելէ եւ խոզանակելէ ետեւ՝ դեանի վրայ պրկելով  
տարածելու եւ կարգ բոտ կարգէ շինելու եւ կակուղ  
լաթով մը, զոր՝ ութ դգալ անուշադրի ողւով  
խառնեալ գոյլ մը շրոյ մէջ թրջելու է: Զուրն երբ  
ազատուի, պէտք է դարձեալ բաղադրել: Գորգն այս  
պարզ եղանակաւ շատ լաւ կը մաքրուի:

**Փ Ե Ք Ր Ը Ո Ւ Ր Է**

**Աշխարհիս շոքեշարժք:**

Բոլոր աշխարհքիս երկաթուղոյ դժբաճն  
վրայ 109.000 շոքեշարժ մեքենայք կ'երթեւեկեն:  
Այս հսկայ թիւուն Եւրոպոյ բաժինն է 63.000  
մեքենայ, Ամերիկայի՝ 40.000, Ասիոյ՝ 3300, Աւս-  
տրալոյ՝ 2000 եւ Աֆրիկոյ՝ 700: — Եւրոպոյ շո-  
քեշարժներէն՝ Մեծն Բրիտանիա եւ Իտալիոս ա-  
մենն մեծ թիւն ունին, այսինքն՝ 17.000, Գեր-  
մանիա՝ 15.000, Գաղղիա՝ 11.000, Աւստրիա Հուն-  
գարիա՝ 5000, Իտալիա՝ 4000, Ռուսաստան 3500,  
Բեզգիա՝ 2000, Սլոանիա՝ 1000, Հարմատա՝ 1000,  
Հելլենտիա եւ այլ տերութիւնք՝ 900:



**Ք Ր Ը Ե Ք Ր Ը Ն Տ Ե Ո Ւ Ր Է**

Վիճակ, 28 Հոկտեմբեր, 1892:

Եւրոպական ըտոր պետութիւնք մէկ  
կողմանէ խաղաղաբար յայտարարու-  
թիւնք կ'ընեն, միւս կողմանէ իրենց սպա-  
նազինութիւնք օր ըստ օրէ կ'ամօցնեն  
անհատապի թուով: Գաղղիոյ 1889ին  
օրինօք, որով գրեթէ ամէն կարող գաղ-  
ղիացի իրական ծառայութիւն կը ստիպուի  
ընել բանակին, գաղղիական բանակին  
թիւը 4 միլիոնէն քիչ մ'ակնի եղած էր:  
Նոյն համեմատութեամբ անձ չէր Ռու-  
սական բանակն: Այժմ՝ Գերմանիա որուն  
բանակն արդէն հսկայ թիւ մը կը ներ-  
կայացընէ, սկսած է նոր ծրագիր մը պա-  
տրաստել, որով գերմանական ազգն իր  
ամէն կարող անձիք արդեամբ զինուոր  
տալ կը ստիպուի, եւ սառով նոյն բանակը  
5 միլիոնէն քիչ պակաս պիտի ըլլայ, այ-

